<<ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ-ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԵՐԻՆ

ԱՌԱՐԿԱ-ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ-ԿԱՐԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ ՁՈՒԼԻԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ-ԼՃԱՇԵՆԻ Ա.ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Սևան 2022

Բովանդակություն

Ներածություն 2
Արժեքներ տարբերակումը 5
Արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում <<Նպատակներ, խնդիրներ>> 6
Արժեքային համակարգի ձևավորման ուսումնասիրություն և ընդհանուր բնութագիր..... 9
Արժեքային համակարգի ձևավորումը սովորողների մոտ օտար լեզվի դասաժամերին... 14
Եզրակացություն..... 17
Օգտագործված գրականության ցանկ 19

Ներածություն

Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժության մեջ ընկալվում է բավականին լայն իմաստով: Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր,մշակութային, իմացական և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ,բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին նախապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին:Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում:Արժեհամակարգի ձևավորման համար հանրակրթության բնագավառում կարևոր նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները,հատկապես մեծ է հումանիտար ոլորտի առարկաների դերը:Մասնավորապես անգնահատելի է օտար լեզուների դերը այս հարցում:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը,որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության,սեփական ժողովրդի պատմության,նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Այսօր տարածված են ինչպես արժեքների պահպանման, այնպես էլ փոփոխման մասին խոսակցություններ, որոնք, սակայն, մնում են անորոշ, նկարագրական հարթության մեջ: Մեզանում դիտարկվող մի շարք երևույթներ միայն մասամբ կարելի է բացատրել անցումային լինելու և այլ նոմինալ հասկացություններով: Այդ երևույթներից մեկը տարբեր սոցիալական խմբերիբևեռացումն ու փոխադարձ բացասական վերագրումներն են արժեքների տեսակետից: Ինչպես վերը նշեցինք, սոցիալական և մշակութային անհամասեռություն առկա է բոլոր երկրներում, սակայն այնպիսի ինտենսիվ դիսկուրս արժեքների ու հակաարժեքների, սեփական և «սխալ» խմբերի միջև տարբերության մասին, ինչպիսին այսօր ընթանում է Հայաստանում,ամեն տեղ չես գտնի: Փոխադարձ մշակութային-արժեքային դիստանցիան տարբեր քաղաքացիական և ավանդական խմբերի միջև բավական մեծ է առնվազն ընկալումների մակարդակում: Հիմնական տեսանելի գծերից մեկը լարվածությունը, հակադրությունն է պայմանականորեն անվանվողավանդականի ու «արևմտյանի» միջև, որ տարբեր մասնավոր հարցերի շուրջ ընթանում է տարբեր ինտենսիվությամբ: «Գլխավոր խնդիրն այն է, որ ավանդականը և ժամանակակից պոլիտկոռեկտ արևմտյանը հակասության մեջ են գտնվում: Եվ դա

արտահայտվում է բոլոր մակարդակներում»,-մատնանշում է մեր կողմից հարցված փորձագետներից մեկը: Մեկ այլ փորձագետի դիտարկմամբ՝ չնայած վերջին շրջանում անհատի վրա խմբային վերահսկողության որոշակի թուլացմանը, անհատական որոշումների ընդունման հարցում որոշակի ազատականացմանը, «այնուամենայնիվ, մնում ենք ավանդական արժեքների շրջանակներում, և մերմոտեցումն առավելապես ավանդական է: Օրինակ, մենք մարդու մեջ շարունակում ենք կարևորել ոչ թե նրա ձեռքբերովի որակները, այլ ի ծնե ունեցածները՝ ում զավակն է, ում բարեկամն է»: Ակնհայտ է, որ մշակութային փոխակերպումներն այսօր չեն ընթանում գծային կերպով՝ ավանդականից անշեղորեն դեպի ոչ ավանդական: Բազմաթիվ ընդհատումներ,վայրիվերումներ կան, և մեծ իմաստով այսօր ունենք էկլեկտիկ պատկեր՝ գերիշխող արժեքների և վարքաձևերի միջև անհամարժեքությամբ:Վերարժևորումն օրինաչափ գործընթաց է, բայց տարբեր հասարակություններում այն ընթանում է քանակական և բովանդակային որոշակի տարբերություններով: ՀՀ հանրության արժեքային կողմնորոշիչները հստակ չեն և՝ բովանդակային առումով (որոնք են այդ արժեքները և ինչ են նշանակում), և՝ կառուցվածքի տեսակետից (ինչ համակարգ են կազմում, որոնք են դրանում ավելի առաջնային, որոնք՝ ավելի ստորադասված): Սովորական են դարձել մեկնաբանությունները երկակի ստանդարտներով ապրելու, երկարժեքության, անոմիայի, հակադիր արժեքների գոյակցության մասին:

Մարդկային արժեքները սերնդեսերունդ փոխանցվում են կրթության և օրինակի միջոցով: Երեխաները սովորում են տանը և դպրոցում, բայց նաև ընդօրինակում են իրենց մեծերին, ուստի ուժեղ արժեքներ ունեցող տանը պետք է համաձայնություն լինի ասվածի և արվածի միջև: Գոյություն ունեն արժեքների բազմաթիվ տեսակներ՝ սկսած ամենաընդհանուրից՝ ընդունված մարդկանց մեծամասնության կողմից, մինչև առավել անձնական և մտերիմ, յուրաքանչյուրին բնորոշ:

Աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական,ազգային,մշակութային,ընտանեկան,կրթական,

հասարակական,սոցիալական և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները,այսինքն՝ աշակերտի մջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի

ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով:Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, չափանիշների,հայացքների յուրացումը միշտ չէ,որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և չափանիշներին:Ավանդական մջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով,այս առումով իրավացի է Մ.Մոնտենը. <<Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց հետևից>>:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է,երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, նրա վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են ըստ նրա տարիքային առանձնահատկությունների:Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը,կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանագրությունը:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են,կամ իրենց համար հեղինակավոր,երևելի մարդկանց հետ շփումները:Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական այնպես էլ բացասական մոդելներ, բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա,դրա համար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն:

Գաղտնիք չէ, որ այսօր սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ուղղակիորեն կապված է հասարակության մեջ տեղի ունեցող բազմաթիվ փոփոխություններով: 21-րդ դարում նոր տեխնոլոգիաները, ծրագրերը, կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու նորարարությունները թելադրում են նորովի մոտեցում յուրաքանչյուր աշակերտի:

Սովորողի անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ կարևոր նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները,որոնցով ստեղծված համաշխարհային նշանակության գրական ստեղծագործություններն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ, այդ պատճառով էլ հանրակրթական դպրոցներում դասավանդումը չպետք է լինի

օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակ, այլ այն պետք է դառնա սովորողի գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մեծ հնարավորություն, որի դերը չպետք է թերագնահատել: Դպրոցներում օտար լեզուներին մեծ հնարավորություն տալով, մենք սովորողներին կարող ենք տալ օտար արժեքները ճանաչելու, գնահատելու, օտար գրականության մարգարիտներով հարստացնելու սովորողերի գիտելիքների պաշարները, ձևավորել նրանց մոտ գեղագիտական ճաշակ, որը էական նշանակություն կունենա նրանց արժեհամակարգի ձևավորման լիարժեքության մեջ:

Արժեքներ տարբերակումը

Արժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Սուբյեկտի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցությանը տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների բանահյուսության մեջ: Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ հանրության մեջ բնականոն գործելու համար: Այսպիսով անհրաժեշտ է տարբերակել արժեք-միջոց և արժեք-նպատակ հասկացողությունները: Օրինակ <<իշխանությունը>>, մի բան է որպես միջոց, մեկ այլ բան որպես՝ նպատակ, նմանապես փողը և փառքը: Երբ իշխանությունը, փողն ու փառքը դառնում են անձի գերագույն արժեք, դա հիվանդագին և ախտածին երևույթ է, մինչդեռ որպես միջոց դրանք համարվում են կյանքի ընդունելի ու անհրաժեշտ տարրեր:

Առանձնացնենք նաև արժեք-արժանիքները, որոնք անձի համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են, այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է <<անհատ-ազգ>> փոխհարաբերությունների կարգավորման առումով: Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես <<հաստատակամություն>>, <<աշխատասիրություն>>, <<համբերատարություն>> և այլն: Պետք է տարբերակել ազգային արժանիքներ

հասկացողությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ՝ արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն:

Արժանապատվությունը սեփական <<Ես>>-ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը:

Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ:

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա:

Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է: Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է: Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի առաջացման:

Այսպիսով պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է: Այն անհատներն ու ազգերը, ոոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները վրա է հասնում ոգու սովը:Ոգեղենությունը պեք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը:

Արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում <<Նպատակներ, խնդիրներ>>

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ:

Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Դպրոցում ազգային արժեքների ձևավորման մեջ մեծ է հայոց պատմության դասաժամերի դերը:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին: Հենց այս պատճառով է , որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:[7]

Հայոց պատմություն առարկայի նպատակներից ամենակարևորը զինելն է աշակերտներին ազգային արժեքներով: Մերօրյա իրականությունը թելադրում է հայ սերնդին, առավել քան երբեք, զինվել գիտելիքով և հայրենասիրությամբ՝ պետականության հիմքերը ամրապնդելու համար: Աչքի առաջ ունենալով ծանր պատերազմի հետևանքով ունեցած մեր կորուստները, և միևնույն ժամանակ մեր զինվորների կատարած հերոսական դրվագները, գալիք սերունդը պետք է լավ գիտակցի իր վրա դրված մեծ պատասխանատվությունը: Այս գործում շատ մեծ է ուսուցիչներիս դերը և մենք անելիքներ շատ ունենք մեր սերնդին հայրենասիրությամբ և ազգային արժեքներով դաստիարակելու

գործում: Այստեղ անհրաժեշտ է նշել նաև միջառարկայական կապերի կարևորության մասին: Առարկաների ճիշտ համագործակցության շնորհիվ է, որ աշակերտների մոտ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը:Կարևոր է նաև օտար լեզուների ընդլայնված և խորը իմացությունը: Օտար գրկանության միջոցով ևս կարելի է աշակերտների մեջ սերմանել սեր դեպի հայրենիք,ինչպես նաև սեր մերձավորի հանդեպ,պատահական չէ սեր արմատի կրկնությունը: Այն քրիստոնեական մեր էությունը բնութագրող կարևոր պայման է: Հավատի և հույսի հետ՝ նաև սեր...Այս արժեքներն են, որ փոխանցվում են աշակերտներին և ձևավորում ամուր ու կայուն արժեքային համակարգ:

Արժեհամակարգի ձևավորվան համար անփոխարինելի դեր և նշանակություն ունի հայոց լեզուն և գրականությունը: Առարկաների դասավանդման ժամանակ աշակերտները ծանոթանում են հայոց լեզվին և հայ գրականության մեծանուն գրողների գործերին: Նրանց մոտ ձևավորվում է հատուկ վերաբերմունք դեպի համամարդկային արժեքները: Ռազմահայրենասիրություն, մշակութային արժեքներ, գեղագիտական արժեքներ, բարություն, ազնվություն, սեր,

Ճշմարտախոսություն, կամք, քաջություն, ազատություն....և այլ արժեքներ են սերմանում աշակերտների մեջ:

Ուսուցիչները օտար լեզվի դասաժամերին օտար գրողների ստեղծագործությունների մի ամբողջ արժեքային ֆոնդ են փոխանցում աշակերտներին:

Մանկավարժական գործունեության մեջ մենք գործ ունենք մարդու հետ, ում պետք է առաջին հերթին մարդ մնալու արժեքը փոխանցենք

Աշակերտների մեջ արժեքային համակարգ ձևավորվում է նաև

«երգ/երաժշտության», «ազգային երգ ու պար»-ի, «բնագիտամաթեմատիկական»,

«ֆիզիկական կուլտուրայի», «ՆԶՊ» և մյուս առարկաների դասաժամերին: Երեխաների մեջ սերմանվում է սեր դեպի ազգային և համաշխարհային երաժշտությունը՝ զարգացնելով նրանց մեջ ճաշակ, մտածելակերպ, վերաբերմունք և այլ հատկանիշներ: Խնդիրները լուծելու կարողություն, ճկունություն, մտածողություն, վերլուծելու ունակություն և այլ արժեքներ ձևավորվում են բնագիտամաթեմատիկական առարկաների դասավանդման ընթացքում:

Արժեքների համաշխարհային հետազոտություններն արվում են ոչ այնքան մշակույթների վերաբերյալ ճանաչողական հետաքրքրությունից դրդված, այլ միջազգային քաղաքականություններ մշակելու նպատակով: Քանի որ արժեքներն արտացոլում են ոչ միայն մշակութային ինքնատիպություն, այլև քաղաքական կողմնորոշումներ: Արժեքային գործընթացների մասին խոսելիս ներհասարակական գործընթացների քննարկումը նույնքան կարևոր է, որքան միջմշակութային համեմատումները, այս նպատակով անհրաժեշտ են սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություններ, որոնք կդիտարկեն մակրո-,մեզո- և միկրոփոփոխությունները, արժեքային կողմնորոշումներն ու ապակողմնորոշումները կրող անհատներին:

Այսպիսով, բոլոր ուսումնական առարկաները ճիշտ միջառարկայական կապերի կիրառմամբ, խմբային խաղերի միջոցով, բեմականացումներով, քննարկումներով, սալիկաշարերի պատրաստմամբ, միջոցառումների անցկացմամբ, խաղերի միջոցով, ներկայիս լայն մեթոդաբանական գործիքները կիրառելով կարող են, նորովի և նոր մոտեցմամբ, սերմանել արժեքային մի ամբողջ համակարգ աշակերտների մեջ:

Արժեքային համակարգի ձևավորման ուսումնասիրություն և ընդհանուր բնութագիր

«Ձեր համոզմունքները կերտում են ձեր մտքերը, ձեր մտքերը դառնում են ձեր խոսքերը, ձեր խոսքերը դառնում են ձեր գործողությունները, ձեր գործողությունները դառնում են ձեր սովորությունները, ձեր սովորությունները կերտում են ձեր արժեքները, ձեր արժեքները կերտում են ձեր ճակատագիրը»:

-Մահաթմա Գանդի

Փիլիսոփայության մեջ գոյություն ունի արժեքների բնույթի մասին ուսմունք, որը կոչվում է *աքսիոլոգիա* (հունարեն՝ ἀξία - արժեք, հունարեն՝ λόγος - բան, խոսք, բառացի՝ ուսմունք արժեքների մասին): Աքսիոլոգիան փիլիսոփայական ուսմունք է արժեքների բնույթի, իրականության մեջ նրանց տեղի և արժեքային աշխարհի կառուցվածքի մասին:

Արժեքների ձևավորման ուսումնասիրության մեջ իր ուրույն տեղն ունի Մ. Մեսսեյը: Հեղինակը կարծում է , որ մարդու արժեքային համակարգը ձևավորվում է մի քանի փուլերի ընթացքում.

1- ին փուլ – ***Դրոշմի***: Այս փուլը ընդգրկում է երեխայի՝ մինչև 7 տարեկան դառնալը: Ըստ Մ. Մեսսեյի՝ երեխաներն այս փուլում նման են «սպունգի», կլանում են այն ամենը, ինչը տեղի է ունենում իրենց շրջապատում և ընդունում են գրեթե ամեն ինչ որպես բացարձակ ճշմարտություն, հատկապես, եթե դա փոխանցում են ծնողները:

2- րդ փուլ – ***Կրկնօրինակման:*** Այս փուլը ընդգրկում է երեխաների 8-13 տարեկան հասակը: Այս փուլում երեխաները կրկնօրինակում են իրենց ծնողներին, ուսուցիչներին, համադասարանցիներին, շրջապատող մարդկանց:

3- րդ փուլ – ***Սոցիալականացման:*** Այս փուլը տևում է 13 տարեկանից մինչև 21 տարեկանը : Այս փուլում երեխաների համար շատ կարևոր է իրենց հասակակիցների կարծիքը և կրում են նրանց ուղիղ ազդեցությունը իրենց վրա: Արժեքների ձևավորման այս փուլում, շատ մեծ ազդեցություն ունեն հուզական իրադարձությունները:

Արժեքների ուսումնասիրության բնագավառում իր ուրույն հետազոտությունն է կատարել Շվարցը: Ըստ հեղինակի, երբ մարդ մտածում է արժեքների մասին առաջին հերթին առանձնացնում է, թե որ արժեքներն են առավել կարևոր իր համար կյանքում: Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի համար, բայց բացարձակ անկարևոր մյուսի համար: Արժեքների տեսություններում կարևորվում է այն հայեցակարգը, որտեղ առանձնացվում են արժեքների ներքոնշյալ վեց հատկանիշները.

- ✓ Արժեքները համոզմունքներ են: Մարդիկ, որոնց համար անկախությունը կարևոր արժեք է, «սթափվում» են , երբ նրանց անկախությունը վտանգվում է, հուսահատվում են, երբ անկարող են լինում այն պաշտպանելու, և վերջապես երջանիկ են, երբ կարող են վայելել այն:
- ✓ Արժեքները կապված են ցանկալի նպատակների հետ, որոնք մոտիվացնում են մարդուն կատարելու որոշակի գործողություններ:
- ✓ Արժեքները լայն և ընդգրկուն հասկացություններ են: Այս հատկանիշը տարբերակում է արժեքներն ավելի նեղ հասկացություններից, ինչպիսիք են նորմերը և մոտեցումները, որոնք սովորաբար վերաբերում են կոնկրետ գործողությունների, օբյեկտների կամ իրավիճակների:
- ✓ Արժեքները ծառայում են որպես սկզբունքներ կամ չափանիշներ:Արժեքներն ուղղորդում են մարդկանց որոշակի գործողությունների:

- ✓ Մարդու գործողություններն ուղղորդվում են բազմաթիվ արժեքներով: Ցանկացած վարքագծի կամ վերաբերմունքի վրա ազդում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ արժեքներ:

Ըստ Շվարցի վերը թվարկվածը վերաբերում է բոլոր արժեքներին:

Արժեքների մեկ այլ տեսություն էլ ներկայացրել է Մ. Ռոկիչին: Ըստ նրա արժեքները բնութագրվում են հետևյալ հատկություններով:

- Մարդուն հատուկ արժեքների քանակը այնքան էլ մեծ չէ:
- Բոլոր մարդիկ ունեն միևնույն արժեքները, սակայն տարբեր մակարդակներով:
- Արժեքները կազմավորված են համակարգում:
- Արժեքների աղբյուրները դիտվում են մշակույթում, հասարակությունում և անձի մեջ:

Վերը նշված տեսություններից կարելի է ենթադրել, որ արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը: Մարդը սոցիումի մեջ իր վրա է կրում տվյալ միջավայրի մշակութային փոփոխությունները:

Այն նորմերը, որոնք ձևավորվել են հասարակության մեջ, հանդիսանում են արժեհամակարգերի բարձրագույն դրսևորումները: Արժեք և նորմ հասկացությունները տարբերվում են: Արժեքները՝ վերացական, ընդհանուր հասկացություններ են, իսկ նորմերը՝ որոշակի իրավիճակներում մարդկանց վարվելակերպի կանոններն են կամ առաջնորդող սկզբունքները: Արժեհամակարգերը, ձևավորվելով հասարակության մեջ, մեծ դեր են խաղում, քանի որ ազդում են նորմերի վրա: Արժեքներ կարող են համարվել.

- Առողջությունը
- Սերը, ընտանիքը, երեխաները, տունը
- Մտերիմները, ընկերները, շփումը
- Ինքակառավարումը աշխատանքի մեջ: Աշխատանքից հաճույք ստանալը
- Նյութական բարեկեցությունը

- Հոգևոր արժեքները, հոգևոր աճը, կրոնը
- Ժամանցը՝ հաճույք, հոբբի, զվարճանք
- Ստեղծագործական ինքնադրսևորումները
- Ինքնակրթությունը
- Սոցիալական կարգավիճակը և դիրքը հասարակության մեջ
- Ազատությունը (խոսքի, ընտրության և այլն)
- Կայունությունը:

Գոյություն ունեն նաև այլ արժեքներ

- նյութական արժեքներ
- հոգևոր արժեքներ
- մնայուն արժեքներ
- մշակութային արժեքներ:

Դ. Ս. Լիխաչևն իր «Նամակներ լավի և գեղեցիկի մասին» աշխատության մեջ որոշ կողմերից փորձում է բացահայտել մարդկային արժեքների գաղափարը: Նա ամենակարևոր արժեքը համարում է կյանքը ՝ ուրիշի, իր սեփական, կենդանիները և բույսերը: Նա ասում է, որ կյանքը սահմաններ չունի, և պետք է սովորել զգալ և տեսնել ոչ նյութականը:

Առանձին ազգի համար արժեքը նրա մշակույթն ու լեզուն է, իսկ ողջ մարդկության համար՝ գեղեցկությունն ու սերը:

Շատ դժվար է խոսել մարդկային արժեքների մասին, քանի որ յուրաքանչյուրն ունի իր արժեքները: Արդյունքում ՝շատ դժվար է նաև ընդհանրացնել և կազմել համընդհանուր մարդկային արժեքների ցանկ: Որոշ փիլիսոփաներ ասում են, որ մարդկային համընդհանուր արժեքներն ընդհանրապես գոյություն չունեն: Բայց, այսպես թե այնպես, դրանք գոյություն ունեն մոլորակի վրա ապրող յուրաքանչյուր մարդու ներսում:

Համաշխարհային մշակութային արժեքների ուսումնասիրման մեջ մեծ դեր ունեն օտար լեզուները, ազդեցիկ են այսպես կոչված չափողական մոտեցումները, որոնք սկիզբ են առել Գ.Հոֆսթեդի և Հ.Տրիանդիսի հայտնի մոտեցումներից: Այդպիսի չափումներից են Հոֆսթեդի առաջարկած երկարաժամկետ և կարճաժամկետ

կողմնորոշումները և այլն:

Երկարաժամկետ կողմնորոշումն, ըստ նրա, արտահայտվում է ուղղվածությամբ դեպի ապագան, դեպի պրագմատիկ արդյունքները և բնորոշ է արևմտյան հասարակություններին: Իսկ կարճաժամկետը՝ դեպի անցյան ու ներկան:Չափողական մոտեցումների հիմնական գաղափարն այն է ,որ մշակութային զանազանությունը բացարձակ բնույթ չի կրում, ինչի արդյունքում հասարակությունները կարելի է տեղավորել որոշակի չափման համակարգում: Վերջին շրջանում չափողական հետազոտություններն ընթանում են առանձնահատուկ ինտենսիվությամբ և նոր տեսական մոդելներով: Դրանցից ամենամասշտաբայինը այսօր արժեքների համաշխարհային հետազոտությունն է ամերիկացի քաղաքագետ Ռ.Ինգլհարթի ղեկավարմամբ: Ռ. Ինգլհարթը համարում է , որ հասարակությունները կարելի է համեմատել ըստ հետևյալ երկու բեևեռային չափումների, 1.ավանդական և աշխարհիկ-ռացիոնալ արժեքներ և 2.գոյապահպանման և ինքնտիրապետման արժեքներ:

Յուրաքանչյուր անհատի արժեքների գերակայությունը տարբեր է: Ուստի կարող ենք ասել, որ կախված հասարակության նորմերից, մարդու շրջապատից և ընտանեկան կարգավիճակից արժեքային համակարգը ցանկացած մարդու համար անհատական է ու յուրովի:

Արժեքային համակարգի ձևավորումը սովորողների մոտ օտար լեզվի դասաժամերին

Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ է օտար լեզվի դերը: Օտար լեզվի ուսուցումը իր մեջ ներառում է այբուբենի, բառակազմության և քերականական կանոնների, հաղորդակցման կանոնների, ինչպես նաև այդ երկրի մշակույթի և կարևոր նորմերի ուսուցում:

Լեզվի ուսուցումը կամուրջ է հանդիսանում տարբեր մշակույթների միավորման համար: Մենք չենք կարող հասկանալ մշակույթը առանց լեզուն սովորելու: Եվ չենք կարող սովորել որևէ լեզու, առանց մշակույթի հետ ծանոթանալու: Այսպիսով, անհնար է սովորել որևէ օտար լեզու, առանց այդ երկրի մշակույթի հետ ծանոթանալու:

Ե՞վ լեզուն, և՞ մշակույթը մեծ դեր են խաղում աշակերտների անհատականության և արժեհամակարգի ձևավորման մեջ:

Մշակույթն է մեզ սովորեցնում ինչպես շփվել ուրիշների հետ, ձևավորելով արժեքներ և էթիկայի կանոններ: Այս ամենից զատ հարկ է նշել, որ հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է աշակերտների մոտ ձևավորել հարգանք դեպի օտար մշակույթը և ավանդույթները, ձևավորել գիտելիքներ օտար լեզվակիր ժողովրդի արվեստի և գրականության ճյուղերից:

Տարրական և միջին դպրոցում օտար լեզվի դասաժամերին արժեքային համակարգը ձևավորվում է հիմնականում հեքիաթների միջոցով:

Հեքիաթների ուսուցումը աշակերտների մոտ ձևավորում է տարբերակում լավի- վատի, բարու-չարի, դրականի-բացասականի, բարության-չարության, ազնվության-անարդարության, խելացիի-հիմարի, ագահի-շռայլի, իրականի-երևակայականի, և այլն:

Հեքիաթները լինում են իրապատում, հրաշապատում և կենդանական: Հեքիաթներում կենդանիները ներկայացնում են մարդկային տարբեր գծեր: Աղվեսը՝ խորամանկություն, արջը՝ բարություն, առյուծը՝ հզորություն, նապաստակը՝ վախկոտություն, գայլը՝ ագահություն, շունը՝ հավատարմություն, և այլն: Այս հատկանիշների միջոցով է, որ

աշակերտները նմանեցնելով իրենց հեքիաթի հերոսներից մեկին ձևավորում են արժեքներ: Հեքիաթը երեխայի համար վախերին դիմակայելու, տարբեր իրավիճակներում հանգուցալուծում և երջանիկ ավարտ գտնելու հնարավորություն է ստեղծում թեկուզ և մի փոքր մոգության օգնությամբ, որը մենք ինքներս ենք ակնկալում պատմություն պատմելու այս հրաշալի ձևից:

Դպրոցում օտար լեզվի դասաժամերին արժեքային համակարգը սովորողների մոտ ձևավորվում է համեմատականներ անցկացնելով: Օտար մշակույթը ուսումնասիրելով ձևավորում են հարգանք դեպի օտար և ինչպես նաև սեփական մշակույթը, ձևավորում են հոգևոր արժեքներ, գնահատանք, վերաարժևորում են սեփական ավանդույթները: Օտար լեզվի դասաժամերին աշակետների մոտ արժեքներ ձևավորվում են հույզերի, զգացմունքների, ապրումների ազդեցությամբ: Այս փուլում շատ դեռահասներ սիրահարվում են, որոշ դեպքերում հիասթափվում և այս իրադարձությունների արդյունքում է, որ նոր արժեքներ են ձևավորվում, այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սերը, հարգանքը, հանդուրժողականությունը, ապրումակցումը և այլն: Այս տարիքային խմբին հատուկ է սոցիումի մեջ արժեքային համակարգ ձևավորելը: Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ:

Պարզելու համար, թե որ արժեքներն են ձևավորվում աշակերտների մոտ ուսումնառության ընթացքում հարկ է կատարել հետազոտություն: Հետազոտության ընթացքում հարցմանը մասնակցել են տարրական, միջին և ավագ դպրոցի մի խումբ աշակերտներ: Կարևոր է նշել նաև, որ հետազոտությունը կատարվել է գյուղական համայնքում սովորողների շրջանում:

Հարցին, թե ո՞ր արժեքներն են ձևավորվել ձեր մեջ դպրոցում, տարրական դպրոցի աշակերտների պատասխանը հետևյալն էր.

«Ձինվորը, Հայրենիքը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, բարությունը, հավատարմությունը, հարգանքը, օգնելը փոքրերին, ծնողասիրությունը»:

Միջին դպրոցի սովորողները նշել են հետևյալ արժեքները. «Ընտանիքը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, բարությունը, ազնվությունը,

հավատարմությունը, կենդանասիրությունը, անկեղծություն, հարգանք, նոր ծանոթությունները գնահատելը, հավասարությունը, ազատությունը»:

Ավագ դպրոցի սովորողները ներկայացրել են հետևյալ արժեքները.

«Հայրենասիրությունը, վստահությունը, անկեղծությունը, կյանքը, սերը, հարգանքը, հետաքրքրությունը, հավատարմությունը, կրթվելը, խելքը, բարությունը, միմյանց գնահատելը, հավատը առ Աստված, արժանապատվությունը, ճշտախոսությունը, կամեցողությունը, խոհեմությունը, առատաձեռնությունը, նվիրվածությունը, աշխատասիրությունը, ազատությունը, ընկերությունը, մարդ լինելը»:

Այսպիսով, հետազոտական աշխատանք կատարելուց հետո պետք է նշել , որ բոլոր տարիքային խմբերում էլ ձևավորվում է այնպիսի արժեքային համակարգ,որը լավատեսություն է ներշնչում: Պետք է ճիշտ ուղղորդենք աշակերտներին ներկայիս տեղեկատվական բազմանյութ իրականության մեջ, որպեսզի իրենց ուրույն դիմագիծը ճիշտ ձևավորեն արժեքային համակարգի կոնտեքստում և երբեք չկորցնեն այն:

Կրթության միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ:

Եզրակացություն

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը կատարելուց հետո եկանք հետևյալ եզրահանգումներին:

- Կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը:
- Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները:
- Արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը: Մարդը դրսևորվում է սոցիումի մեջ և իր վրա է կրում տվյալ միջավայրի մշակութային փոփոխությունները:
- Ե՞վ լեզուն, և՞ մշակույթը մեծ դեր են խաղում աշակերտների անհատականության և արժեհամակարգի ձևավորման մեջ:
- Առարկաների ճիշտ համագործակցության և միջառարկայական կապերի շնորհիվէ, որ աշակերտների մեջ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը:

Կատարված հետազոտության արդյունքները ցույց տվեցին նաև, որ արժեքային համակարգի ձևավորման սկզբում մեծ է ծնողների և ուսուցիչների դերը: Երեխաները ընկալում են համամարդկային արժեքները, որոնք փոխանցվում են նրանց, որպես բացարձակ իրողություն: Միջին տարիքում երեխաները ավելի շատ փնտրտուքների մեջ են: Նրանց վրա մեծ է շրջապատի ազդեցությունը: Կրկնօրինակում են իրենց հասակակիցներին, հայտնի մարդկանց, ծնողներին, և այս համատեքստում է, որ կարծես թե արժեքների ծաղկաքաղ է տեղի ունենում նրանց մոտ: Ավագ դասարաններում սովորողների արժեքային համակարգը կախված է շրջապատից, նրանց հուզական ապրումներից, զգացմունքներից, որն էլ թելադրում է որոշակի արժեհամակարգ:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործընթացը իրականանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական, տեղեկատվական և այլն: Մեր՝

ուսուցիչներիս դերը շատ մեծ է աշակերտների մեջ ճիշտ արժեհամակարգ ձևավորելու գործում: Արժեհամակարգ ձևավորելուց զատ, յուրաքանչյուր ուսուցչի համար, կարծում եմ, աննկարագրելի բերկրանք է տեսնելը՝ իր կատարած աշխատանքի պտուղները գործնականում կիրառված:

- Միջմշակութային հաղորդակցությունը, (որը լավագույնս կարող են ապահովել օտար լեզուները) նոր մշակույթների հետ ծանոթությունը , օտար լեզվակի մարդկանց հետ շփումը նույնպես կարող են ձևավորել արժեքներ սովորողների մեջ
- Օտար լեզվից գրական ստեղծագործությունների թարգմանությունը ևս կարող է աշակերտների մոտ արժեհամակարգի ձևավորման լավագույն միջոց դառնալ
- Հայ և օտար լեզվով գրված ստեղծագործությունների միջև տարվող համեմատականները ևս արժեհամակարգ ձևավորող պրոցես են:

Արժեհամակարգ լավագույնս կարող է ձևավորվել նաև.

- Ինտելեկտուալ խաղ-մրցույթների միջոցով:
- Սովորողների ինքնակրթությունը խրախուսելու միջոցով:
- Ականավոր գործիչների, ազգային հերոսների հետ հանդիպումներ կազմակերպելու միջոցով:
- Դասաժամերին ՏՀՏ գործիքների ավելի շատ կիրառության միջոցով:
- Կամավոր աշխատանքների մեջ աշակերտներին ընդգրկելով:

Այսպիսով ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը պետք է լինի դաստիարակել բարձր արժեքներ կրող,զարգացած մտահորիզոնով քաղաքացիներ,այս գործունեությունն իրականացնելիս ուսուցիչն ունի իր կոնկրետ հեղինակը կամ ստեղծագործությունը , որը նրան օգնում է ամենադյուրին կերպով իրականացնելու իր առջև ծառացած մանկավարժական խնդիրներն ու դրան տրվող լուծումները:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և այն մշտապես պետք է մնա ուսուցչի ուշադրության կենտրոնում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Հ. Սարգսյան, Մշակույթի տեսություն, Երևան, 2003:

2. Ա. Ղուկասյան , Հայոց պատմությունը 8-9 -րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:

3. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոցսև Գ.Ա., Աշակերտների դաստիարակությունը

4. կոմպլեքսային մոտեցում,Երևան 1987թ., 112էջ

5. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում,

6. Երևան, 1986., 86էջ

7. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317էջ:

8. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985., 84 էջ:

9. https://www.goodreads.com/author/quotes/5810891.Mahatma_Gandhi